10596

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«10» 07 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0121-23

Ձեռնարկողը՝ ***«Շամախյան» ՍՊԸ***
Տավուշի մարզ, ք. Դիլիջան Շամախյան 2/1

Գործունեությունը՝ ***Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 101 և 117 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0121-23

«10» հոկտեմբեր 2023թ.

Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 101 և 117 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Շամախյան» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, ք. Դիլիջան

Ներածական մաս. Գործունեության նպատակն է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում կառուցել բազմաբնակարան շենք:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7)-րդ կետի, «ա» ենթակետի 1500 ք.մ և բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի կառույցներն ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, դասակարգվում են «Գ» կատեգորիայի:

Բազմաբնակարան շենքի նախագծման հիմք են հանդիսացել՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք N Ա1-140, սեփականաշնորհման վկայականներ N18082022-11-0017 և N01112022-11-0008, պատվիրատուի՝ «ՇԱՄԱԽՅԱՆ» ՍՊԸ-ի և «ԿԵՏ ԱՐՔԻԹԵՔԹ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագիրը:

Ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի կառուցվում է բազմաբնակարան շենք:

Նախատեսվող բազմաբնակարան շենքի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 4545 ք.մ, ուստի սույն նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատոսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական Նախագծվող տարածքը գտնվում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի Կալինինի փ. 101 և 117 հասցեներում: Հողամասը գտնվում է Կալինինի և Գետափնյա փողոցների միջանկյալ հատվածում՝ ծովի մակարդակից մոտ 1250 մետր բարձրության վրա: Երկու հողամասերի գումարային մակերեսը կազմում է 4545.0 քմ:

Թաղամասում առկա են արդեն գոյություն ունեցող և՛ բազմաբնակարան շենքեր, և՛ անհատական բնակելի տներ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազննվող տարածքը գտնվում է Գուգարաց լեռնաշղթայի Հալաբ լեռան ծայր հարավային լանջում և հարում է Աղստև գետի ձախ, բարձր դարատափին: Տարածքի ռելիեֆը լեռնային - բլրային է և ընդհանուր թեքությամբ ընկնում է դեպի հարավ:

Հետազննվող տարածքի բարձրությունը գտնվում է 1370մ.-ի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից, բացված խորությունների վրա ստորգետնյա ջրեր չեն հայտնաբերվել:

Բուն գործունեության տարածքում Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Շինարարության և կառուցվածքների շահագործման վրա ազդող երկրաբանական պրոցեսներ (սողանք, կարստ, փլուզում և այլն) չկան:

Հողամասը գտնվում է խիտ կառուցապատման մեջ և հեռու է տարանցիկ ճանապարհներից: Տեղադիրքից ելնելով, հողամասի ներսում շենքի շուրջ պարագծով նախատեսվում է ունենալ հրշեջ մեքենայի համար ճանապարհ՝ համապատասխան հակահրդեհային հեռավորություններով:

Նախատեսվում է առաջին հարկի արտաքին պատին տեղադրել հրշեջ մեքենայի միացման գլխիկ, որը ներքին խողովակաշարով կմիացվի հակահրդեհային պոմպակայանի բաշխիչ սանրիկին:

Շենքը կունենա հողամասի հատակագծային նիշից 8 վերգետնյա և 2 ստորգետնյա հարկ: Ծավալատարածական հորինվածքից և գեոլոգիայից ելնելով նախագծվող կառույցը սեյսմիկ կարով բաժանված կլինի երկու մասնաշենքի: Ամեն մասնաշենք կունենա իր աստիճանավանդակն ու վերելակը:

Ստորգետնյա 2 հարկերում նախատեսվում է տեղակայել կայանատեղի՝ նախատեսված 61 մեքենայի համար: Արտակարգ իրավիճակների պայմաններում ավտոկայանատեղին կծառայի որպես պատսպարան, որտեղ կլինեն առանձնացված սանհանգույցներ բնակչության բոլոր խմբերի համար: Պատսպարանները կահավորված կլինեն օդափոխության համակարգով, ավտոմատ հրդեհաշիջման սպրինկլերային համակարգով, վթարային լուսավորության համակարգով և տարհանման ելքերի նշաններով:

Հեղեղատար համակարգի խողովակները նախատեսվում է անցկացնել ընդհանուր օգտագործման միջանցքներով:

Առաջին հարկը նախատեսվում է իրականացնել բնական քարի երեսապատմամբ: Հաշվի առնելով Դիլիջան քաղաքի ճարտարապետական յուրահատկությունները, տեղային շինարարական նյութերը, փայտի կարևորությունը դիլիջանյան ճարտարապետության մեջ, որոշում է կայացվել ճարտարապետական լուծումներով կառույցի արտաքին երեսապատման մեջ արտահայտիչ դարձնել փայտը:

Յուրաքանչյուր բնակարան կունենա իր բաց պատշգամբը, որոնց բազրիքները իրականացվելու են փայտից՝ դիլիջանյան պատշգամբների ոճին համահունչ:

Տանիքը նախատեսված է հարթ է, նախատեսվում է կազմակերպված ջրահեռացման համակարգ: Անվտանգության նկատառումներից ելնելով տանիքում նախատեսվում են մետաղական բազրիքներ 1.20մ բարձրությամբ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 4545 ք.մ

Կառուցապատման տարածք՝ 1177.3 քմ

Ճանապարհ, Սալվածքներ, մայթեր – 1547.6 քմ

Կանաչապատում՝ - 1820.1 քմ

Ավտոկայանատեղեր ՝ 61 հատ

Բնակարանների քանակ՝ 91 հատ

Բազմաբնակարան բնակելի շենքի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Շենքում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամաբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Առաջին ստորգետնյա հարկում նախատեսվում է ենթակայան:

Բազմաբնակարան շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով կստանան տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը կիրականացվի Կալինինի փողոցով անցնող D=150մմ ջրատարից, իսկ կոյուղին կմիացվի Գետափնյա փողոցով անցնող D=300մմ կոյուղատարին:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 869 Կվա հզորությամբ կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, միանալով 110/35/6 կՎ Աղստև ԵԿ-ի Կալինինի 1;2 երկտրանսֆորմատորային ենթակայանի 0.4 կՎ վահանից, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Դիլիջան քաղաքի ոռոգման ջրի ցանցից, աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեությունը իրենից կներկայացնի ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություններ: Այն ներդաշնակ կլինի շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանա վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն արտանետումների հետ, որոնք են՝

- փոշու արտանետումներ՝ հիմքերի փորման ընթացքում,
- ցեմենտի փոշու արտանետումներ, տարածքում նախատեսվող բետոնահանգույցից,
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝

- շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060001004/, վտանգավորության դասը՝ IV, քանակը՝ 1480 խմ,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող, /ծածկագիրը՝ 31401100 08 09 5/, վտանգավորության դասը V, քանակը՝ 12000 խմ.,
- տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) /ծածկագիրը՝ 9120040001 00 4/, վտանգավորության դասը IV, քանակը՝ 9.9 տ:

Շինարարական աղբը ամբողջությամ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բազմաբնակարան շենքի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղերը /ծածկագիրը՝ 5410020702033/ կհավաքվեն մետաղյա տարողությունների մեջ և կհանձնվեն նշված թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին, հնարավոր վթարների ժամանակ յուղի արտահոսքը կանխելու նպատակով բետոնյա հարթակը կունենա որոշակի թեքություն հատված որտեղ էլ կկուտակվի յուղը, որտեղից կհավաքվի սորբենտով և կպահվի մետաղյա տարողության մեջ, ինչը հետագայում նույնպես կտրամադրվի վերամշակող ընկերության:

Շրջակա միջավայրի վրա թվարկված աշխատանքներից առաջացող հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու, մեղմելու նպատակով նախատեսված են բնապահպանական մի շարք միջոցառումներ.

1. Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- կառուցապատման ենթակա տարածքի ցանկապատում,
- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատսխան բարձրության,
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ ջրցանիիրականացում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաար ստուգել և կարգաորման իրականացում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափման իրականցում փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

2. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.
- ջրցանի ծավալները այնպեսի հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերի միավում մեկ բակային ցանցում և միացվեն սելավային ջրացանցին:
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի և անվադողերի լվացումից առաջացող հոսքերի ուղորդում պարզարան, որը տեղադրված կլինի շինարարական հրապարակին կից և իրենից կներկայացնի պլաստմասե 25խմ ծավալով տարողություն: Պարզարանում տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինարար:

- կանաչապատ տարածքների ոռոգման իրականացում ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով,
- շինտեխնիկայի անվադողերի լվացման իրականացում շինհրապարակից դուրս գալուց առաջ բարձր ճնշման լվացող միջոցներով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

1. Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները՝ հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը, հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտի անմիջապես դարսում լայնակույտերով, եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացում խոտացանքով կամ այլ եղանակներով և այլն:
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ ապահովվում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար ավազ կամ մանրախիճ տեղադրում: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխում համապատասխան աղբավայր և այն փոխարինում նորով:
- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած շինարարկան թափոնների տեղափում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:
- տարածքի բարեկարգում և մաքրում շինաղբից:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը կիրականացվի շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չեն պահեստավորվելու:

Շինարարական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա թվարկված հնարավոր բացասական ազդեցություններից բացի հնարավոր են նաև արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, աշխատողների վնասվածքներ, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն, որոնց հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար ևս նախատեսվում են մի շարք միջոցառումները՝ մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողների, այդ թվում նաև վարորդների, հրահանգավորման անցկացում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում, հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհների և անցումների միշտ ազատ լինելու ապահովում, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով շրջանցման

ուղղությունը ցույց տվող ցուցանակների տեղադրում, հեղուկ նյութերի տեղափոխում շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, բոլոր աշխատողներին անհատական պաշտպանության միջոցներով ապահովում և մի շարք այլ միջոցառումներ:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակում շահագործման ապահովում, տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն կդարձվի դրանց աղմուկի մակարդակին, շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց՝ տեխնիկական նորմալ վիճակում շահագործում և այլն:

Նախատեսված է նաև բուսական և կենդանական աշխարհի պահպանության համար մի շարք միջոցառումներ, որոնք նկարագրված և ամրագրված են հայտում:

Տարածքում նախատեսվում է տնկել տարբեր տեսակի եղևնիներ մոտ 45 հատ, վերջնական տեսակային կազմը և քանակները կհստակեցվեն համայնքի կողմից նախագիծը համաձայնեցնելուց հետո:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 170խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Դիլիջանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների ոռոգման ջուրի կմատակարարվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 1100 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը կիրականացվի համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի N1404:

Բազմաբնակարան շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության հետևողականություն տնկված ծառերի աճի և խնամքի համար, չորացած տեսակների փոխարինում նորերով:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 1100.000 դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Արտակարգ իրավիճակների, Առողջապահության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Տավուշի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման
3. ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
4. Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան համալիրի էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումները իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018 N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:
5. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել և իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանները:
6. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական և մոնիթորինգի պայմաններում նախատեսված միջոցառումների իրականացումը:

Շինարարության ընթացքում և աշխատանքների ավարտից հետո, որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է՝

- շինհրապարակի տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, ապահովել լուսավորությամբ, տեղադրել մուտք գործող արգելող նշաններ,
- ապահովել և իրականացնել ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները,
- ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել, հնարավորինս բերելով սկզբնական վիճակի,
- ամբողջ շինարարական աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շին հրապարակից,
- շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) զերծ պահել շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով,
- շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից չի առաջանա ջրի արտահոսք,
- շինհրապարակից ելքի ժամանակ անհրաժեշտ է տեխնիկական միջոցների անվադողերի լվացում,
- տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն՝ հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի,
- ապահովել ծառերի և թփերի 90% կպչողականություն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը, կանաչապատումը իրականցնել տարածի բնակալիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային տեսակներով, ձեռնարկել տնկված թփերի, ծառերի, խոտածածկի պահպանում և մոնիտորինգ բուսականության բարձր աճն ապահովելու համար, կպչողականություն չապահովող ծառատեսակները փոխարինել նորերով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Շամախյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 101 և 117 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան